եւ ապստամբ կարող էր այնտեղ պատսպարան գտնել: Հինգ տարոայ ընթացքում քաղաքը լցոեցաւ բազմաթիւ բնակիչներով:

Հայոց թագաւորներից երկուսը ապաստանի քաղաքներ հիմնեցին. մէկը՝ Արշակ երկրորդը, Մասիս լեռան ստորոտում, միւսը Գագիկ Արծրունին՝ Աղթամարայ կղզու վրայ: Երկուսի ձեռնարկութիւնն եւս միանման էր, բայց նպատակները տարբեր էին: Առաջինը, Արշակ երկրորդը, մտածում էր ջնջել նախարարութիւնները եւ առհասարակ աւատականութիւնը եւ, Հայաստանի բաժանուած, մաս-մաս եղած իշխանութիւնները միացնելով՝ դարձնել նրանցից մի ինքնակալ, միահեծան պետութիւն: Այդ մտքով հիմնեց նա ապաստանի քաղաքը: Նախարարների հետ պատերազմելու համար հարկաւոր էր նրան մի հզօր կուսակցութիւն, եւ այդ կուսակցութիւնը մտածում էր կազմել երկրի դժգոհներից: Բոլոր այն անձինք, որոնք նախարարների դէմ որեւիցէ յանցանք էին գործել, բոլոր պարտականները, որ անկարող էին իրանց պարտքը վճարել, եւ մինչեւ անգամ բոլոր մարդասպանները, գողերը, աւազակները, որոնք, կեանքի եւ ապրուստի անհրաժեշտութիւններից ստիպուած, եղեռնագործութեան էին դիմել, մի խօսքով, բոլոր յանցաւորներն ու դատապարտեալները կարող էին նրա քաղաքում ապաստան գտնել եւ ազատ մնալ թէ օրէնքից եւ թէ դատաստանից: Նախարարների իշխանութիւնը խորտակելու համար մտածում էր նա ընտրել իբրեւ գործիք նախարարներից նեղուած, հարստահարուած թշուառներին: Բոլորովին տարբեր մտքով Գագիկ Արծրունին հիմնեց Աղթամարայ ապաստանի քաղաքը: Նրա նպատակը այնպէս ընդարձակ, այնպէս հայրենասիրական չէր, որպէս Արշակինը: Նրա նպատակը շատ նեղ եւ անձնական էր: Նա ինքը մի նախարար էր՝ Բագրատունի թագաւորների գերիշխանութեան ներքոյ: Ապստամբելով նրանց դէմ, հիմնեց նա Վասպուրականում մի նոր, հակաթոռ թագաւորութիւն: Եւ Աղթամարը եղաւ նրա ընդդիմադրութեան գլխաւոր կռռանը:

Այն բոլոր շէնքերից, որ կառուցոեցան, կատարոեցան կղզու վրայ, աւելի հրաշափառը, աւելի գեղեցիկն էր այն տաճարը, որ թագաւորը հիմնեց սուրբ խաչի անունով: Բազմաթիւ նաւեր կրում էին ցամաքից վէմերի ամենաընտիրները տաճարի շինուածքի համար: Մինչեւ անգամ թագաւորը կործանեց Բաղէշ գաւառի Կոտոմ գիւղի հոյակապ բերդը, որ պատկանում էր Զուրարիկ անունով մի կռապաշտ ցեղի, եւ քարերը Աղթամար բերեց: Բացի քարերից, տաճարի շինուածքի մէջ գործ դրոեցաւ աւելի քան երկու հարիւր հազար լիտր երկաթ:

Մանուէլ ճարտարապետը սպառեց իր բոլոր արարչագործ տաղանդը այդ տաճարը աւելի մեծաշուք, աւելի փառաւոր կառուցանելու համար, քան